

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՏՈՒՆՅՈՒՅՑԻ ԹԱՐԳԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

1. Հայկական միջնադարյան զրչազիր ծեռագրերը պահպանել են տեղեկություններ Անդրեաս տոմարագետի մասին: Նրա տոմարին նվիրված աշխատությունը թարգմանվել է հայերեն, սակայն ամբողջական վիճակում չի պահպանվել:

2. Այս բնագիրը Մաշտոցի անվան Մատենադարանի 1973 թվահամարի ծեռագրում, ,Անդրէասայ մեծի վասն սրբոյ պասեցի յետ և յառջ խաղալոյ և վասն դրութեան երկերիւրեկին, , վերնագիրն է կրում: Այստեղ գրված է. , ,Հասարակելոյ տուրնջեան և զիշերոյ քստ թուոյ եզիպտացոցն ի ի և ի Դ ամսոյն լինի, որ անուանեալ կոչի պեմենովթ, որ զայ կշոի քստ թուոյ անտիոքացոց ի ի երորդում դիւստրոս ամսոյն, այսինքն ի մեհեկանի, և քանզի քրիստոս ի Դժ աներորդում աւուր ամսոյն առաջնոյ չարչարեցաւ, յայտ է ետ հասարակելոյ տուրնջեան և զիշերոյ արեգ ամսեան, և այս ոչ վրիպեալ է ի մէնջ, թեւ այժմ ի մեր ամս և աւուրս յարեգ ամիս են, բազում անգամ արարին հրէայք զգտիկն, , : Վերոհիշյալ հատվածը, ինչպես նշել են ուսումնասիրողները /բնագիրը հրատարակել և ուսումնասիրել են Ա.Գ.Աբրահամյանը և Է.Բ.Աղայանը/, հնարավորություն է տալիս թվագրելու Անդրեասի տոնացույցի հայերեն թարգմանելու ժամանակը: Ըստ բնագրի, զարնանային զիշերահավասարի օրն քնդուկվել է, քստ եզիպտացիների թվականության՝ Պեմենովթի 24-ի=քստ անտիոքացիների թվականության՝ դիւստրոսի 20-ին=քստ հուլյան տոմարի՝ մարտի 20-ին /նահանջ տարին՝ մարտի 19-ին/= քստ հայկական մեծ տոմարի՝ մեհեկանին /353-356 թթ. մինչև 377-380 թթ.՝ մեհեկանի 24-ից մինչև մեհեկանի 30-ը/ և արեգին /381-384 թթ.՝ մինչև 497-500 թթ. արեգի 1-ից մինչև արեգի 30-ը/: Քանի որ Անդրեասի 200-ամյակի վերջին՝ նահանջ տարում՝ 552 թ. նավասարդի 1-ը եղել է հուլիսի 11-ին, ուստի 353 թ. /առաջին տարում/ նավասարդի 1-ը կլինի օգոստոսի 29-ին /հուլիսի 11+49 օր=50 օր=օգոստոսի 29-ը/, իսկ մարտի 20-ը=մեհեկանի 24-ին /353-356 թթ./:

3. Գարնանային զիշերահավասարի օրը հնարավորություն է տալիս բնագրի թարգմանության ժամանակը որոշելու 381-384 թթ. մինչև 497-500 թթ., իսկ քրիստոսի չարչարանքի 14-րդ օրը, այն է՝ լուսնի լրման օրը, էլ ավելի է սահմանափակում թարգմանության ժամանակը, այսինքն՝ 381-384 թթ. մինչև 445-448 թթ. /արեգի 1-ից 17-ը/:

Քանի որ զարևոտային գիշերահավասարը եղել է մարտի 20-ին, ապա Բրիստոսի չարժարանքի 14-րդ օրը՝ լուսնի լրման օրը, կլինի ապրիլի 2-ը:

4. Անդրեասն իր 200-ամյա տոնացույցը կազմելիս օգտագործել է լուսնի 19-ամյա պարբերաշրջանը / $19 \times 5 + 19 \times 5 + 10 = 200$ /: Անդրեասն տոնացույցի վերջին տարում, որը 19-ամյա բոլորակի 10-րդ տարին է, լուսնի լրման օրը, քստ Անանիա Շիրակացու, եղել է սխառնի 3-ին, այսինքն՝ մարտի 24-ին, իսկ առաջին տարին /ըն տոնացույցի, թե 19-ամյակի/ լուսնի լրման օրը կլինի նիսանի 12-ը, այսինքն՝ ապրիլի 2-ը: Ուստի դժվար չէ գտնել, թե 381-384-445-448 թթ. 19-ամյա բոլորակի 1-ին տարին որ Թվականներին է համընկել: Դրանք են՝ 391 թ. /առհանջ տարին՝ 392 թ. / $\frac{410 \text{ օ.}}{412 \text{ օ.}}$ / և 429 թ. / $\frac{432 \text{ օ.}}{432 \text{ օ.}}$ որոնցից առաջին երկու թիվը մրցակցությունից դուրս է քնկնում՝ մի դեպքում հայերեն զրերը տակավին հայտնի չլինելու, մյուս դեպքում զատիկ օրվա պատճառով: Մնում է 429 թ. /քստ հայոց տոմարի՝ 429-432 թթ./, որը և եղել է Անդրեասն տոմարի Թարգմանություն տարին: Ի դեպ, հայկական որոշ սկզբնաղբյուրների ոչ հիմնավոր տվյալների համաձայն, Անդրեասն տոնացույցի Թարգմանություն տարին, քստ մեր հաշվումների, եղել է 421-424 թթ., որը քիչ հավանական է:

5. Անդրեաս տոմարագետի երկի արժեքը մի կողմից մեծ է նրանով, որ օգտագործվել է տոները կարգավորելու համար, իսկ այժմ քնազրի արժեք ունի, մյուս կողմից պարզվում է, որ այն Մաշտոցյան դպրոցի առաջին Թարգմանություններից մեկն է:

ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԻՆՎՈՎԴՄԻԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԴԻՏԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՓՈԽԱՌՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀՈՐ ԶԵՐ

1. Հայտնի է, որ օրոգովրդագիտական /ազգաբանական ու բանագիտական/ և հնագիտական ուսումնասիրությունների հիմնադրող դաշտային նյութն է, որի բացահայտումն ու հավաքումն իրագործվում է գիտաբաժնի հետազոտության եղանակով, բուն նպատակ ունենալով, դաշտայինի հետ զրավոր, Թանգարանային ու այլ կարգի համապատասխան նյութերի համադրմամբ, մարդկային պատմա-մշակութային հասումների ու հմտությունների համալիր քննությունը: Ըստ այդմ, պատմա-համեմատական մեթոդի կիրառմամբ, լուսաբանվում են մշակույթ այն տարեթիվի, համեթիվի և եկեղեցիական քաղաքականությունները՝ մի կողմից, յուրահատկությունները՝ մյուս կողմից, տարածական և ժամանակագրական ընդ-